




ԻՆՉՊԷՍ ՅԱՅՏՆՈՒԵՑԱԻ

ՈՐՊԷՍ


ՓՐԿԻՉ





ԻՆՉՊԷՍ ՅԱՅՏՆՈՒԵՑԱԻ
ՈՐՊԷՍ

ՓՐԿԻՉ





ՀՏԴ 23/28
ԳՄԴ 87.36
Գ 229

Գալֆայեան-Փանոսեան Հիլտա

Գ 229

Ինչպէ՞ս յայտնուեցաւ որպէս Փրկիչ /Գալֆայեան-Փանոսեան Հիլտա.-Եր.:
Հեղինակային իրատարկություն, 2012.-28էջ:

Կրօնա-դաստիարակչական այս նկարաշարը կը ներկայացնէ
Տէր Յիսուս Քրիստոսի կեանքն ու վարդապետութիւնը:


COMMENT LE SAUVEUR S' EST REVELE
La vie de JESUS et son enseignement en bande dessinée.

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 87.36

Բոլոր իրաւունքները պահպանուած են հեղինակային իրավունքի միջազգային օրէնքներով:

ISBN 978-9939-53-796-2

© Հիլտա Գալֆայեան-Փանոսեան, 2012



Աստուածաշունչը կ'ըսէ թէ Ջրհեղեղէն շատ ժամանակ յետոյ մարդիկ դարձեալ չարացան, սկսան չաղօթել եւ չհնազանդիլ Աստուծոյ: Աստուած մտածեց իր որդին Յիսուսը երկիր ուղարկել, որպէսզի ան մարդոց խօսի մարդո՛ց լեզուով եւ անոնց հասկցնէ թէ պէտք է բարի ըլլան, Աստուծոյ հնազանդ ըլլան եւ միշտ աղօթեն: Ուստի, օր մը Աստուած Գաբրիել հրեշտակը Գալիլիայի Նազարեթ քաղաքը բնակող Մարիամ անունով անուշիկ աղջկան մը ուղարկեց, որ նշանուած էր Յովսէփ անունով մէկուն:

Ուրախացի՛ր, շնորհալի կոյս, Տէրը քեզի հետ է: Չաւակ մը պիտի ունենաս եւ անունը Յիսուս պիտի դնես: Ան Աստուծոյ որդին է: Պիտի փրկէ մարդիկը իրենց մեղքերէն եւ Փրկիչ պիտի կոչուի:

Բայց ես դեռ ամուսնացած չեմ, ինչպէ՞ս կրնամ գաւակ ունենալ:



Աստուծոյ Սուրբ Հոգին պիտի իջնէ վրայդ եւ գաւակ մը պիտի ծնիս:

Աստուծոյ համար անկարելի բան չկայ:



Լաւ, Աստուծոյ ուզածը թող ըլլայ:



Աստուած Մարիամէն պահանջեց որ իր ուզածը ընէ: Մարիամ ըրաւ Աստուծոյ ուզածը: Դուք ալ պատրա՞ստ էք Աստուծոյ ուզածը ընելու:

Աստուած ի՞նչ կուզէ որ ընեք -

Աստուած կ'ուզէ որ հնազանդ ըլլաք ձեր ծնողներուն, ձեր ուսուցիչներուն եւ իրեն՝ Աստուծոյ: Պատրա՞ստ էք Աստուծոյ եւ ձեր մեծերուն հնազանդելու, անոնց ուզածը ընելու:

Այդ ժամանակ մարդահամար պիտի կատարուեր: Մարիամ եւ Յովսէփ
 Բեթղէիմ գացին, իրենց անունները արձանագրել տալու: Գիշերը պառկելիք
 տեղ չգտան, մինչ Մարիամ զգաց որ իր զաւակը պիտի ծնի: Յովսէփ եւ
 Մարիամ ոչխարներու գոմ մը գտան: Այնտեղ Յովսէփ չոր խոտերով մտուր մը
 շինեց եւ մտուրին մէջ ծնաւ Յիսուս մանուկը:



Բեթղէիմի մօտերը հովիւներ կային իրենց ոչխարներով:
 Աստուծոյ իրեշտակը երեւցաւ անոնց:



Ուրախացէ՛ք,
 որովհետեւ
 անտիս մը
 պիտի
 տամ
 ձեզի:

Այսօր Բեթղէիմի
 մէջ ծնաւ Յիսուս,
 որ Աստուծոյ որդին
 է եւ բոլոր մարդիկը
 պիտի փրկէ իրենց
 մեղքերէն:




Փա՛ռք ի
 բարձունս
 Աստուծոյ,
 եւ յերկիր
 խաղաղութիւն,
 ի մարդիկ
 հաճութիւն:
 Զրիստոս
 ծնա՛ւ:



Հովիւները փնտռեցին եւ գտան
 Յիսուսի մտուրը: Տեսան Յիսուս
 մանուկը եւ քաղաք երթալով յուր
 տունն որ բոլոր մարդոց համար
 փրկիչ մը ծնաւ:

Յիսուս, Աստուծոյ որդին,
 մարդոց բոլոր մեղքերը ի՛ր
 վրայ առաւ եւ ուզեց անոնց
 տեղ ի՛նք պատժուիլ: Այսպէս,
 Յիսուս փրկեց մարդիկը եւ
 կոչուեցաւ Փրկիչ: Յիսուսի
 հաւատալով կրնանք մեր
 յանցանքներէն փրկուիլ, եթե
 ներողութիւն խնդրենք
 Աստուծմէ եւ Լոյն յանցանքերը
 այլեւ չգործենք:

Յիսուս ծնաւ 2000 տարի առաջ, Պաղեստինի Բեթղեհէմ քաղաքին մէջ: Զրեաներու երկրի այս մասը այն ժամանակ կը գտնուէր Զոմէական Կայսրութեան իշխանութեան տակ: Եւ Զոմի Օգոստոս Կայսեր անունով Զրեաներու երկիրը կը կառավարուէր Զերովդէս թագաւորի կողմէ:



Երեք մոգեր,
Մելքոն, Գասպար եւ
Պաղտասար,
որոնք հարուստ եւ
իմաստուն մարդիկ
էին, հրաշալի աստղէ
մը առաջնորդուելով
Երուսաղէմ եկան եւ
Զերովդէս թագաւորին
հարցունցին.



Ո՞րն է Զրեաներու թագաւորը,
որ նոր ծնաւ:
Կ'ուզեցք զայն տեսնել:

Չեմ գիտեր: Եթէ գտնէք ինծի
այ ըսէք, որպէսզի ես այլ երթամ
եւ երկրպագեմ իրեն:



Պետք է
սպաննել
այդ
մանուկը:



Մոգերը իմանալով որ Բեթղեհէմի
մէջ ծնած է Ան, եկան, գտան
Յիսուս մանուկը, երկրպագեցին.



Ահա մեր նուէրները
նորածին թագաւորին՝
ոսկի, կնդրուկ եւ զմուռս:

Անոնք հրէշտակէ մը առաջնորդուելով
եւ առանց Զերովդէսին հանդիպելու
վերադարձան իրենց երկիրները:

Երբ Զերովդէս մեռաւ.
Մարիամ եւ Յովսէփ
վերադարձան Նազարէթ
քաղաքը: Այնտեղ
մեծցաւ Յիսուս եւ
կոչուեցաւ Նազովրեցի:

**Աստուած միշտ
կը փրկէ իրեն
հաւատացողները եւ
հնազանդողները:**

Երբ Յիսուս 12 տարեկան եղաւ, ծնողքը գինքն ալ միասին տարին Երուսաղէմ՝ Պատեքի տօնը տօնելու: Տօնական օրերը անցընելէ յետոյ, Յովսէփ եւ Մարիամ իրենց բարեկամներուն հետ Նազարէթ պիտի վերադառնային: Յանկարծ տեսան որ Յիսուսը չկայ:

Սկսան փնտռել: Տաճարին մէջ գտան Յիսուսը, որ կրօնաւորներու հետ կը խօսէր:



Այս ո՞ր ես, տղաս, հայրդ եւ ես քեզ կը փնտռենք:



Չէի՞ք գիտեր որ ես իմ Զօրս տունը պիտի գտնուիմ:



Յետոյ Յիսուս անոնց հետ գնաց Նազարէթ:

Յիսուս Նազարէթ քաղաքին մէջ մեծցաւ: Ան կը մեծնար, կը զօրանար հոգիով եւ Աստուծոյ օրհնութիւնը իր վրայ էր, որովհետեւ միշտ հնազանդ էր իր ծնողքին: Եւ քանի որ Յովսէփ հիւսն էր, այսինքն փայտէ առարկաներ շինող, Յիսուս ալ սորվեցաւ այդ գործը եւ աշխատեցաւ հօրը հետ, մինչեւ 30 տարեկան, միշտ հնազանդ իր ծնողքին եւ Աստուծոյ:

Այդ միջոցին Յորդանան գետին մօտ եկած էր Չաքարիայի եւ Եղիսաբեթի որդին Յովհաննէս, որ երկար տարիներ անապատին մէջ կ'ապրեր:

Ապաշխարեցէ՛ք, ձեր մեղքերը խոստովանեցէ՛ք, որպէսզի Աստուած ներէ ձեզի: Որովհետեւ Բրիստոս աշխարհ եկած է արդէն եւ ձեզ պիտի փրկէ ձեր մեղքերէն:



Յովհաննէս Յորդանան գետի ջուրերուն մէջ կը մկրտէր հաւատացեալները եւ այս պատճառաւ կոչուեցաւ Յովհաննէս Մկրտիչ: Յիսուս 30 տարեկան էր, երբ իր փրկարար գործը սկսելէ առաջ ուզեց խոնարհիլ եւ մկրտուիլ Յովհաննէսէն:

Պետք է որ ե՛ս մկրտուիմ քեզմէ, դո՛ւն ինձի կու գաս:



Ձգէ որ մկրտուիմ քեզմէ, որպէսզի Աստուծոյ կամբքը կատարուի:



Յովհաննէս Յորդանան գետին մէջ մկրտեց Յիսուսը, որ երբ ջուրէն դուրս ելաւ, Աստուծոյ Սուրբ Հոգին աղանիկ կերպարանքով իջաւ իր վրայ: Նոյն ատեն լսուեցաւ Աստուծոյ ձայնը որ կ'ըսէր.


Ահա իմ սիրելի որդիս, որուն պէտք է հնազանդիք:



Յիսուս մկրտուելէն ետք
անապատ քաշուեցաւ եւ
40 օր ծոմ պահեց,
այսինքն չճաշեց եւ
աղօթքով ապրեցաւ:

Քառասուն օր ետք,
երբ շատ անօթեցած էր,
սատանան մօտեցաւ իրեն.

Սատանան 2-րդ անգամ փորձեց զիկք.



Եթէ Աստուծոյ որդին ես, գնա՛,
իկքզիկքդ վա՛ր նետե՛ Երուսաղէմի
Տաճարին աշտարակէն եւ
հրեշտակները թող բռնեն քեզ,
եթէ կրնան:

Սատանան 3-րդ անգամ ըսաւ.



Աշխարհի ամբողջ
հարստութիւնը,
փառքը եւ բոլոր
թագաւորութիւնները
քեզի կու տամ, եթէ
երկրպագես ինձի:

Սատանան գլխիկոր հեռացաւ եւ
հրեշտակները մօտեցան Յիսուսի:



Եթէ Աստուծոյ որդին ես, սա
քարերուն ըսէ որ հաց դառնան:

Մարդ միայն
հացով
չ'ապրիր, այլ՝
Աստուծոյ
խօսքերով:




Աստուած
կ'ուզէ որ
քու Տերդ
չփորձես:




Ետի՛ս գնա,
սատանայ:
Պէտք է
երկրպագել
միայն Տեր
Աստուծոյ:

Աստուծոյ խօսքը ամենէն մեծ զէնքն
է չարին դէմ: Պէտք է միշտ աղօթել,
Աստուծոյ խօսքերը կրկնել, որպէսզի
չարիքը հեռանայ մեզմէ:

Մկրտուելէ ետք Յիսուս սկսաւ քարոզել: Մարդոց սորվեցուց բարի գործեր կատարել, մարդիկը սիրել, թշնամիներուն ներել, յանցանքները խոստովանիլ եւ Աստուծոյ ներողութիւն խնդրել:



Յիսուս ունեցաւ շատ աշակերտներ, որոնք միշտ իրեն հետ էին: Անոնց մէջէն Յիսուս ընտրեց 12 հոգի, որոնք Առաքեալ կոչուեցան, որ կը նշանակէ ուղարկուող: Որովհետեւ անոնք աշխարհի տարբեր կողմերը պիտի ուղարկուէին Յիսուսի խօսքերը տարածելու համար: Այս 12 առաքեալներէն երկուքը՝ Ս. Բարթողիմէոս եւ Ս. Թադէոս Հայաստան եկան եւ Հայերուն բացատրեցին Յիսուսի խօսքերը եւ Հայոց մէջ Քրիստոնէութիւնը տարածեցին: Անոնց շնորհիւ է որ Հայերը դարձան աշխարհի առաջին Քրիստոնեայ ազգը եւ հիմնեցին Հայկական Եկեղեցին, որ աշխարհի առաջին Քրիստոնեայ Եկեղեցին է: Բոլոր միւս ազգերը մեզմէ ետք է որ Քրիստոնեայ եղան:



Քարոզելէ եւ Աստուծոյ խօսքերը սորվեցնելէ բացի, Յիսուս ամբողջ երեք տարի հրաշքներ գործեց: Այսինքն, անբուժելի հիւանդները բուժեց, մեռած մարդիկը ողջնցուց, կոյրերուն աչքերը բացաւ:

Այս բոլոր հրաշքներուն շնորհիւ ժողովուրդին մեծ մասը կը հաւատար այլեւս, որ ինք Աստուծոյ որդին է:

Օր մը Յիսուս Գալիլիա կը գտնուէր: Կանա քաղաքին մէջ հարսանիք կար: Հրաւիրուած էին Մարիամ, Յիսուս եւ իր աշակերտները: Հարսնետորները շատ էին: Խրախճանքի ժամանակ գինին պակսեցաւ: Մարիամ այս բանը իմացուց Յիսուսին եւ սպասաւորներուն ըսաւ.



Ըրէ՛ք իր ըսածները:

Գացէ՛ք եւ ջուրով լեցուցէ՛ք այդ կարասները:

Սպասաւորները երբ լեցուցին, տեսան որ ջուրը գինիի փոխուեցաւ: Յիսուս ըսաւ որ գաւաթ մը լեցնեն եւ սեղանապետին տանին:



Այս ի՛նչ լաւ գինի է:


Բոլորը խմեցին այդ գինին:

Ասիկա Յիսուսի առաջին հրաշքն էր, որով ցոյց տուաւ իր զօրութիւնը եւ աշակերտները տեսան ու հաւատացին իրեն:

Յիսուս օր մը Գալիլիայի ծովակին մօտ կը քարոզեր: Ժողովուրդը կը շատնար հետզհետե: Յիսուս տեսնելով որ բազմութիւնը դժուար կը լսէ իր խօսքերը, աշակերտներէն Սիմոն-Պետրոսին նաւակը նստաւ եւ սկսաւ անկէ քարոզել:



Երբ իր քարոզը վերջացուց, Յիսուս ըսաւ Պետրոսին որ նաւակը բաց ծովը քշեն եւ ուռկանները ծովը ձգեն:



Տէ՛ր, ձուկ չկայ: Ամբողջ գիշերը աշխատեցանք, բայց ձուկ չկրցինք բռնել:



Տէ՛ր, այս ի՛նչ հրաշք է, ուռկանները հիմա լեցուեցան ձուկերով:



Օր մը Յիսուս Երիցով քաղաքը եկած էր: Իրեն կը հետեւէր ժողովուրդը: Ճամբուն վրայ նստած էր կոյր մարդ մը, որ լսած էր Յիսուսի հրաշքներուն մասին:

Յիսուս,
Դաւիթի
որդի,
ողորմէ՛
ինծի:



Ի՞նչ կ'ուզես ինձմէ:



Վարդապէ՛տ,
կ'ուզեմ որ
աչքերս
բացուին:

Գնա՛, քու հաւատքդ
բժշկեց քեզ:

Կոյրին աչքերը բացուեցան
եւ Յիսուսի հետեւն գնաց:

**Եթէ մեծ հաւատքով աղօթենք,
Տէրը մեր խնդրածը կու տայ:**

Ղազարոս Յիսուսի բարեկամն էր, որ կը բնակէր իր երկու քոյրերուն՝ Մարթայի եւ Մարիամի հետ: Օր մը Ղազարոս ծանր հիւանդացեր էր: Քոյրերը Յիսուսին իմացուցին Ղազարոսի հիւանդութիւնը:

Սակայն, Յիսուս իր աշակերտներուն հետ մինչեւ որ Բեթանիա եկաւ, Ղազարոս արդէն մեռած էր: Մարթա լացաւ.



Եթէ հոս ըլլայիր,
եղբայրս չէր
մեռներ:

Եղբայրդ
յարութիւն պիտի
առնէ, Ե՛ս եմ
յարութիւնը եւ
կեանքը: Ո՛վ որ
ինծի կը հաւատայ,
եթէ նոյնիսկ մեռնի,
դարձեա՛լ կ'ապրի:




Տէ՛ր, ես կը հաւատամ
որ դուն Զրիստոսն ես,
Աստուծոյ որդին ես,
որ աշխարհ եկար մեզ
փրկելու համար:

Յիսուս մօտեցաւ այն գերեզմանին, ուր թաղած էին Ղազարոսը: Բարը վերցուցին: Յիսուս աչքերը երկինք բարձրացնելով աղօթեց Աստուծոյ: Յետոյ ուժեղ ձայնով մը ըսաւ.



Ղազարո՛ս, դո՛ւրս ելիր: Բալեցե՛ք պատանքը, որպէսզի երթայ իր տունը:

Մեր բոլոր գործերուն մէջ կը յաջողիսք, եթէ հաւատք ունենասք:



Յիսուս օր մը աշակերտներուն հետ Նաւակ Նստաւ, ծովուն միւս կողմը անցնելու համար: Նաւուն մէջ քունը տարաւ:

Երբ ծովուն բացերն էին, սաստիկ փոթորիկ մը ելաւ եւ Նաւակը ջուրով լեցուեցաւ: Աշակերտները արթնցուցին զինք.



Վարդապե՛տ, տե՛ս, կ'ընկղմինք...



Թերահաւատներ, ինչո՞ւ կը վախնաք:

Հովը եւ ծովը հիմա անմիջապէս կը հանդարտին:



Ուրիշ օր մը Յիսուս Կափառնաում եր գացած էւ տան մը մէջ կը քարոզէր: Անդամալոյծ մը բերին, որպէսզի բժշկէ: Սակայն այնքան շատ բազմութիւն կար որ անդամալոյծը տան տանիքէն պարաններով վար առին: Յիսուս անոնց հաւատքը տեսելով ըսաւ հիւանդին.



Թող մեղքերդ ներուած ըլլան:

Փարիսեցիները սկսան չարախօսել.



Միայն Աստուած կրնայ մեղքերը ներել...



Որպէսզի գիտնաք թէ ես իրաւունք ունիմ մեղքերը ներելու, ահա կ'ըսեմ. - Ելի՛ր անկողիներդ եւ տունդ գնա:

Հիւանդը ելաւ եւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելով իր տունը գնաց: Բոլորը զարմացան եւ հաւատացին Յիսուսին:

Օր մը Յիսուս քաղաքին մէջ տեսաւ որ այրի կնոջ մը մէկ հատիկ գաւակը մեռած է եւ կը տանին թաղելու: Յիսուս մեղքաւ կնոջ եւ մօտենալով մեռեալին, ըսաւ.



- Պատանի՛, ելի՛ր, կանգնէ՛:

Մեռեալը ելաւ եւ սկսաւ քալել:

Մայրի՛կ...



Մեծ մարգարէ մըն է այս մարդը:



Երեք տարի Յիսուս Աստուծոյ հաւատալ եւ գիրար սիրել քարոզեց ժողովուրդին:
Փարիսեցիները, որոնք Աստուծոյ հաւատալ կը ձեւացնէին,
բայց չէին հաւատար, թշնամի էին Յիսուսի:

Երրորդ տարին Յիսուս Ջատիկէն շաբաթ մը առաջ Երուսաղէմ
գնաց իշու մը վրայ նստած: Իրեն կը հետեւէր մեծ բազմութիւն մը:
Շատեր կը պռռային.



Օրհնեալ ըլլայ Ան, որ Աստուծոյ
անունով կու գայ:

Ժողովուրդը այնքան ուրախ էր որ ծաղիկներով եւ ձիթենիի ճիւղերով
կը զարդարէր գետինը, Յիսուսի ճամբան:

Ջատիկէն երկու օր
առաջ, Յիսուս իր 12
աշակերտներուն
հետ ուզեց ընթրել:
Սակայն, նախ ուզեց
անոնց խոնարհութեան
դաս մը տալ: Ան կոնք
մը ջուրով սկսաւ
աշակերտներուն
ոտքերը լուալ:



Դուք գիտ Կարդապետ կը կոչէք եւ լաւ կ'ընէք:
Ուրեմն, եթէ ես ձեր Տէրը եւ Կարդապետը
ըլլալով ձեր առջեւ խոնարհեցայ եւ ձեր
ոտքերը լուացի, դուք ալ իրարու հանդէպ
խոնարհ պէտք է որ ըլլաք:



Ճշմարիտ կ'ըսեմ, ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս:

Տէ՛ր, միթէ ե՛ս եմ:

Տէ՛ր, միթէ ե՛ս եմ:



Որո՛ւ որ պատահո՞ւ թո՞ղելով տամ, ա՛ն է:



Այն աստէն Յուդա ըսաւ.

Տէ՛ր, ե՛ս եմ:



Յիսուս պատահող թո՞ղելով անոր տուաւ եւ ըսաւ.

Դուն քու բերնովդ ըսիր:

Յետոյ Յիսուս առաւ հացը, օրհնեց եւ աշակերտներուն տալով ըսաւ.



Առէ՛ք, կերէ՛ք, աս էմ մարմինս է:



Եւ խմեցէ՛ք զինն, աս էմ արիւնս է, որ պիտի թափուի եւ ձեր մեղքերուն թողութիւն պիտի տայ: Այսպէ՛ս ըրէք իմ յիշատակիս համար:

Յետոյ զինի բաժակը առաւ եւ ըսաւ.

Այս կերպով Յիսուս հաստատեց Սուրբ Հաղորդութեան խորհուրդը, Սուրբ Պատարագը:

Ընթրիքէն յետոյ Յիսուս իր աշակերտներուն հետ Չիթենեաց լեռը ելաւ եւ անոնց ըսաւ.

Այս գիշեր դուք պիտի ուզէք հեռանալ ինձմէ:



Եթէ բոլորն ալ հեռանան, ես չեմ բաժնուիր Քեզմէ:

Այս գիշեր դեռ հաւը չխօսած 3 անգամ պիտի ուրանաս գիս, Պետրոս:



Եթէ մեռնիլ ալ պէտք ըլլայ, դարձեալ չեմ ուրանար Քեզ:

Յետոյ անցան Գեթսեմանիի պարտէզը, ուր Յիսուս առանձնացաւ եւ աղօթեց.

Հայր, օգնէ՛ ինձի, այս բաժակը հեռացո՛ւր ինձմէ, բայց ո՛չ թէ Իմ, այլ Քո՛ւ կամքդ թող ըլլայ:



Գիշերուան ընթացքին 3 անգամ աշակերտներուն քով եկաւ եւ քնացած գտաւ զանոնք:






Չկրցի՞ք արթուն մնալ եւ աղօթել: Ալ ասկէ վերջ արթնցէք, որովհետեւ հասաւ ժամը եւ Մարդու Որդին մեղաւորներուն պիտի մատնուի:

Ահա՛ մատնիչը կը մօտենայ:

Հազիւ Յիսուս այս խօսքերը վերջացուցած էր, երբ Յուդա երեւցաւ զինեալ բազմութեան մը գլուխը անցած: Յիսուսի մօտենալով համբուրեց զայն.



Բարե՛ն, Վարդապետ:

Յուդա՛, համբուրելո՞վ կը մատնես զիս:



Ո՞վ է Յիսուս Նազովրեցին:

Ե՛ս եմ:

Այն ատեն զինուորները բռնեցին, կապեցին եւ տարին Յիսուսը: Քահանաները հարցաքննեցին զայն, բայց յանցանք մը չգտան: Ի վերջոյ անոնցմէ մէկը հարցուց.



Դուն Աստուծոյ Որդի՞ն ես:

Այս մարդը ինքզինք Աստուծոյ տեղ դրեր է: Մահուա՛ն արժանի է:

Դուն քու բերնովդ ըսիր:

Եւ տարին Յիսուսը խաչելու:
Պետրոս դուրսը նստած կը սպասէր:



Ուրիշ երկու անձեր ալ նոյնը հարցուցին
Եւ Պետրոս դարձեալ ուրացաւ:
Երրորդ անգամուն հաւը խօսեցաւ:
Պետրոս այն ատեն յիշեց Յիսուսի
խօսքը եւ լացաւ:



Յիսուսի մահուան
օրը Ուրբաթ էր:
Պիղատոսի
հրամանով Յիսուսի
մարմինը խաչէն
վար առին եւ մօտը
գտնուող
գերեզմանատան
մէջ, վիմափոր ժայռի
մը մէջ թաղեցին:
Գերեզմանին
վրայ ալ հսկայ
քար մը դրին:
Քահանայապետները
Շաբաթ առտու
կանուխ Պիղատոսի
մօտ երթալով
ըսին անոր.



Հրաման ըրէ որ պահակ
զինուորները երեք օր
պահապանութիւն ընեն
Անոր գերեզմանին:
Չըլլայ որ աշակերտները
գողնան Անոր մարմինը:

Պիղատոս շատ զինուորներ կանչեց
եւ հրամայեց որ երեք օր զիշեր ու ցերեկ
պահակ կենան Յիսուսի գերեզմանին առջեւ:

Գիշերը ուժեղ երկրաշարժ եղավ, որովհետև Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջաւ եւ գերեզմանին վրայ դրուած քարը անդին հրեց: Յիսուս յարութիւն առաւ եւ դուրս ելաւ գերեզմանէն: Հրեշտակը տեսնող զինուորները սարսափեցան եւ մարելով գետին ինկան:



Գալիլիացի կիներ, որոնք տեսեր էին թէ ո՛ր թաղուած է Յիսուս, Կիրակի առաւօտ անուշահոտ իւղեր բերին գերեզման, որպէսզի օծեն Ասոր մարմինը: Ճամբան կ'ըսէին իրարու.



Ինչպէ՞ս պիտի անդին հրեցք ծանր քարը:

Եկան ու զարմանքով տեսան թէ քարը վերցուած է տեղէն եւ լուսաւոր հրեշտակ մը նստած է վրան: Կիները վախցան:

Մի՛ վախնաք: Դուք խաչուած Յիսուսը կը փնտռէք: Բայց Ան հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք, գերեզմանը պարապ է:



Շո՛ւտ, գացէ՛ք եւ ըսէ՛ք իր աշակերտներուն, որ Յիսուս մեռելներէն յարութիւն առաւ: Ան Գալիլիա է եւ ձեզ հոն կը սպասէ:

Յիսուս յարութիւն առնելէ յետոյ անմիջապէս երկինք չբարձրացաւ, անմիջապէս Աստուծոյ մօտ չգնաց: Այլ, դեռ 40 օրեր երկրի վրայ մնաց եւ երբեմն երեւցաւ իր աշակերտներուն: Օր մը, իր երկու աշակերտները կը քալէին Էմմաուսի ճամբուն վրայ: Յիսուս մօտեցաւ եւ անոնց հետ խօսելով քալեց:

Երբ Երուսաղէմ հասան, անոնք տեսան որ Առաքեալները հաւաքուած են հոն: Անոնց պատմեցին թէ ինչպէս Էմմաուսի ճամբուն վրայ իրենք հանդիպած էին Յիսուսի: Այդ խօսակցութեան ատեն բոլոր դռները գոցուած էին, որովհետեւ Հրեաներէն կը վախճային: Յանկարծ Յիսուս երեւցաւ անոնց: Աշակերտները սարսափեցան:



Ինչո՞ւ կը վախճայք, Ե՛ս եմ, տեսէ՛ք մարմինս, ոտքերս, ձեռքերս:

Այդ օր, Թովմաս իրենց հետ չէր: Երբ որ իրեն պատմեցին թէ Յիսուսը տեսան, ան չհաւատաց:



Մինչեւ որ գամերուն տեղը չշօշափեմ եւ մատս իր կողը չխօթեմ, չեմ հաւատար, որ Ինքն է:

Ուր օր ետք

Մատդ հո՛ս բեր եւ կո՛ղս խօթէ, ձեռքե՛րս շօշափէ եւ հաւատացեա՛լ եղիր:



Իմ Տէ՛րս եւ իմ Աստուածս ես Դուն:

Դուն տեսնելով հաւատացիր. երանի՛ անոնց որ առանց տեսնելու ալ կը հաւատան:




Յիսուս իր յարութենէն 40 օր յետոյ վերջին անգամ երեւցաւ աշակերտներուն, որոնք հաւաքուած էին Երուսաղէմի մէջ:


Երուսաղէմէն մի' հեռանաք, որովհետեւ քաւի մը օրէն Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք: Սուրբ Հոգին պիտի իջնէ ձեր վրայ: Պիտի երթաք աշխարհի տարբեր կողմերը եւ պիտի վկայէք, այսինքն ձեր տեսածներն ու լսածները պիտի պատմէք բոլորին: Ինչպէս որ Հայրս զիս երկիր ուղարկեց, Ես ալ ձեզ կ'ուղարկեմ աշխարհի գանազան կողմերը:



Գացէ՛ք եւ մկրտեցէ՛ք բոլորը՝ Հօր, Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն անունով: Սորվեցուցէ՛ք բոլորին, թէ ո՛վ որ հաւատայ Աստուծոյ եւ Ինծի ու մկրտուի՝ կը փրկուի: Սորվեցուցէ՛ք բոլորին ինչ որ Ես սորվեցուցի ձեզի:



Եւ գիտցէ՛ք որ Ես ձեզի հետ եմ միշտ:



Այս խօսքերէն յետոյ Յիսուս ձեռքերը օդը բարձրացնելով կամաց-կամաց բաժնուեցաւ իր աշակերտներէն եւ երկինք համբարձաւ:



Ինչո՞ւ
 այդպես
 զարմացած
 կը նայիք:
 Յիսուս երկինք
 համբարձաւ,
 բայց օր մը
 դարձեալ պիտի
 գայ փառքով:

Յիսուսի համբարձումէն 10 օր ետք, երբ աշակերտները հաւաքուած էին
 տաճարին մէջ, յանկարծ երկինքէն ձայն մը լսուեցաւ եւ սաստիկ հոով մը
 լեցուց տաճարը: Սուրբ Հոգին կրակէ լեզուներու ձեւով եկաւ հանգչեցաւ
 առաքեալներուն վրայ: Յիսուսի աշակերտները հրաշալի
 փոփոխութիւն մը զգացին իրենց մէջ եւ սկսան զանազան լեզուներով խօսիլ:

Անոնք նոր
 մարդիկ եղած
 էին՝ քաջութեամբ
 եւ եռանդով
 լեցուած եւ
 պատրաստ էին
 հիմա զանազան
 երկիրներ
 երթալու եւ
 քարոզելու
 տարբեր
 լեզուներով:



Պետրոս խօսեցաւ ժողովուրդին,
որ հաւաքուած էր Պենտեկոստի
տօնին առիթով.



Ո՛վ Երուսաղէմցիներ, ինչո՞ւ
ապշած էք: Դուք որ Նազովրեցի
Յիսուսը չար մարդոց ձեռքով
մեռցուցիք, կը տեսնէք որ Աստուած
յարուրթիւն առնել տուաւ Անոր եւ
Ան միշտ մեր մէջ է: Բոլորս
վկայ ենք ասոր:



Ան մեզի ըսած էր որ
Սուրբ Յոգին պիտի իջնէ
մեր վրայ եւ այսօր կը
տեսնէք որ կատարուեցաւ
Իր խոստումը: Ապաշխարեցէ՛ք
եւ մկրտուեցէ՛ք, որպէսզի
դուք ալ Սուրբ Յոգին շնորհը
եւ ձեր մեղքերուն
թողութիւնը ստանաք:



Այդ օր շատ շատերը մկրտուեցան:



Յիսուս,
Աստուծոյ Որդին, մարդոց
մեղքերուն փոխարէն ի՛նչ խաչուելով
փրկեց մարդիկը իրենց մեղքերէն եւ
կոչուեցաւ Փրկիչ:

Ան, մարդոց սորվեցուց սիրել զիրար,
աղօթել Աստուծոյ, խոստովանիլ մեղքերը եւ նոյն
յանցանքները այլեւս չգործել:

Ուրեմն, դուք ալ աղօթեցէ՛ք Աստուծոյ, սապէս.



այր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիպի անուն Թո,
Եկեսսյէ արքայութիւն Թո.

Եղիպին կամք Թո
որպէս յերկինս եւ յերկրի:
Չհայ մեր հանապազորդ
տո՛ւր մեզ այսօր:

Թո՛ղ մեզ պարսիս մեր
Որպէս եւ մեք թողումք
մերոց պարսապանայ
Եւ մի՛ սակիր
զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա՛ զմեզ ի չարտ.

Չի Թո է արքայութիւն,
եւ զօրութիւն

Եւ փառք յաւիտեանս,
Ամէն:





Գրուածքի հեղինակ՝

Դր. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան

Նկարիչ՝

Աիդա Բոյաջեան

Խմբագիր՝

Ազնիւ Նապեան

Համակարգչային ձեւաւորող՝

Նաիրա Սանթրոսեան

Հովանաւորութեամբ՝

ՄԱՇՏՈՅ, Հայ Լեզուի Պաշտպանութեան Միութեան, Փարիզ
եւ «Կան հրատարակչութիւն» ՍՊԸ, Երեւան 2012.

Տպարան՝

«Ասողիկ»





ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԱՊՈՍՏՈԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՑ ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՄ

DIOCÈSE DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE DE FRANCE

Ուրախութեամբ կ'ողջունենք «ԻՆՉՊԷ՛Ս ՅԱՅՏՆՈՒԵՑԱԻ ՈՐՊԷՍ ՓՐԿԻՉ» կրօնա-դաստիարակչական այս նկարաշարի հրատարակութիւնը, որուն նպատակն է մեր **Տէր Յիսուս Քրիստոսի** կեանքի եւ վարդապետութեան ամենաբնորոշ պաշէրը նկարներու շարքով տեսականացնել, Հաճելի եւ գրաւիչ ձեւով ներկայացնել, որպէսզի անոնց իմաստը դիւրամարս եւ ընկալելի դառնայ մեր դպրոցաշատակ երեխաներուն եւ պատանիներուն:

Ուրախ ենք այս գրքոյկի հրատարակման Համար, քանի որ **ՖրանսաՀայ Թեմը** կարելիութիւնը կ'ունենայ այս կերպով մեր նորաՀաս սերունդի կրօնական դաստիարակութեան նպաստելու:

Գնահատելի է որ **Փարիզի ՄԱՇՏՈՅ Միութիւնը** իր գործունէութեան մէջ կը ներառնէ նաեւ կրօնական դաշտը, շէշտելով դպրոց եւ եկեղեցի կապը, որ Հայ Ժողովուրդի Համար գոյութիւն ունեցած է միշտ, դարերու ընթացքին: Այդ կապի կարեւորութիւնը նորաՀաս սերունդին զգացնելով է որ կարելի կը դառնայ Հայու մեր ինքնութեան տեսականացումը **Սփիւռքի** մէջ:

Գնահատելի է նաեւ գրքոյկի Հեղինակ, **ՄԱՇՏՈՅ Հայ Լեզուի Պաշտպանութեան եւ Զարգացման Միութեան** Հիմնադիր **Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեանի** մտայղացումը եւ իրագործումը:

Կ'ողջունենք այս ձեռնարկը եւ կը յանձնարարենք ծնողներուն օգտուիլ անկէ:

Նորին Արքեպիսկոպոս Զարարեան
Առաջնորդ Ֆրանսայի Թեմի,
Հայրապետական Պատուիրակ
Արեւմտեան Եւրոպայի